ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի մայիսի 15-ի որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՋՀՏ-ԳՀԱՊՁԲ-20/6

«Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի և քսայուղերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՋՀՏ-ԳՀԱՊՁԲ-20/6** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի մայիսի 14-ին, ժամը 16:16-ին, էլեկտրոնային եղանակով ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2020 թվականի մայիսի 15-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

« 1.Խնդրում ենք պարզաբանել արդյոք.

· 4-րդ չափաբաժնով նախատեսվող դիզելային շարժիչի յուղը SAE ջերմաստիճանամածուցիկային ի՞նչ բնութագիր (օրինակ՝ 10w-40, 15w-40, 5w-30 և այլն) և API շահագործական բնութագիր պետք է ունենա:

· 5-րդ չափաբաժնով նախատեսվող կիսասինթետիկ 10w-40 յուղը API ի՞նչ բնութագիր պետք է ունենա:

· 6-րդ չափաբաժնով նախատեսվող հիդրավլիկ յուղը ISO 3448 ջերմաստիճանամածուցիկային ի՞նչ բնութագիր (օրինակ՝ ISO VG 32, 46 կամ 68) և DIN 51524 շահագործական ի՞նչ բնութագիր (HLP կամ HVLP) պետք է ունենա:

Պարզաբանում N 1
Ի լրումն **ՋՀՏ-ԳՀԱՊՁԲ-20/6** ծածկագրով գնանշման հարցման հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար ներկայացվում է.
4-րդ չափաբաժնով սահմանված դիզելային շարժիչի յուղի SAE ջերմաստիճանամածուցիկայնությունը պետք է ունենա 15W-40 և ունենա API SG/CD շահագործական բնութագիր:
5-րդ չափաբաժնով սահմանված կիսասինթետիկ 10w-40 յուղը պետք է ունենա API SG/CD շահագործական բնութագիր:
6-րդ չափաբաժնով սահմանված հիդրավլիկ յուղը պետք է ունենա ISO 46, HLP ջերմաստիճանամածուցիկային բնութագիր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՋՀՏ-ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Տաթևիկ Իսոյանին:

Հեռախոս՝ 093-045-111:

Էլեկտրոնային փոստ՝ jht-gnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ: